ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի՛ բնակիչներ, մեր ազգային ինքնության և պետականության համար մղվող պայքարը շարունակվում է դարեր:

Յուրաքանչյուր տարի, ավելի քան երբևէ, մենք կարիք ենք ունենում բացել մեր ժողովրդի պատմության փառահեղ էջերն ու անել հետևություններ, դասեր քաղել մեր հաղթանակներից ու վրիպումներից:

Այսօր՝ Առաջին Հանրապետության 107-րդ տարեդարձի օրը, յուրաքանչյուր հայ պիտի հայացքն ուղղի դեպի Մայր Հայաստանը:

Հայոց պատմության համար այս օրն անհերքելի արժեք է. սրան պետք է մոտենալ երկյուղածորեն և ամենայն պատասխանատվությամբ:

Մեզանից յուրաքանչյուրը պիտի զինվի ազգային արժանապատվության գիտակցությամբ:

Ժողովուրդը, ով հաշվի չի նստում իր պատմության հետ, դատապարտված է անհաջողության:

Մենք պարտավոր ենք բաց պահել ազատության և հավիտենական կյանքի այն էջը, որի սկզբագիրը դրվեց Բաշ-Ապարանում, Սարդարապատում, Ղարաքիլիսայում մղվող մարտերում, որի յուրաքանչյուր տողը հայի անկոտրուն ոգու և հառնող հավատի արտացոլումն է:

Սիրելի՛ հայրենակիցներ, դարձեք դեպի Մայր Հայաստանը: Հայաստանի Հանրապետությունը թող լինի ձեզանից յուրաքանչյուրի հպարտության և խոնարհումի առարկան: Հազարավոր ազգեր անցել են տարածության և ժամանակի մեջ՝ չունենալով պետություն ու ազգային նկարագիր, նրանց տեղն անգամ չի հիշատակվել պատմության էջերում:

Ուստի, մոտեցե՛ք Հայաստանի Հանրապետությանը զավակի երախտագիտությամբ և տիրոջ ակնածանքով:

Թող այս օրը տոն լինի բոլորիդ սրտերում՝ ի նշան անկախության, ազատության ու հավիտենական պայքարի:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ յուրաքանչյուր ոք, ով Հայոց տան լիիրավ տերն ու պահապանն է:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան